

տատել, անցնելու համար մասսայական շարժումի: Բըռ-
նապետութիւնը աւելի քան զայրագնոտ: Հայ գիւղերը
հսկողութեան տակ էին ներսէն ու դուրսէն մատնիչ-
ներու: «Զօրքը» ամէն տեղ, ու ամէն օր: Երիտասարդու-
թիւնը՝ թերահաւատ ո՛չ գործէն, այլ՝ գործիչներէն: Մըթ-
նոլորտը թաց՝ կասկածէ, դաւէ, խերէ ու իրերհալած կոխ-
ւէ: Ապահովաբար գէշ աստղի տակ ծնած էր անիկա:
Հիմա կը խորհիմ, թէ ինչ գեղեցիկ figure մը ընէր պիտի
անիկա Սահմանադրութենէն ետքը, Պոլսոյ լսարան-
ներուն բեմէն, իր հասակին թերին քանի մը տախտակով
պարտկելէ ետքը, երբ բանար իր երկայն թեւերը ու
գետերը իր բռներուն, տաք, գրաւիչ իր շեշտով ծափեր
խլելով իր փառքի կարօտ հոգիին: Այն օրերուն, այսինքն՝
ինըհարիւրին, ասպարէզը չէր նպաստաւոր անոր նման-
ներուն: Շնորհագրկումը չուշացաւ: Իր ամուր պոռալու
համարձակիլը առաջին քրէական յանցանքը նկատուե-
ցաւ, թէեւ իրականին մէջ իր ճիգը ուրիշ բան չէր, եթէ
ոչ միւսներուն աստիճանին հանել իր ձայնը: Գայթակ-
ղութիւն ու բողոք: Զինքը կախակայեցին լրիւ ժողովի
մը մէջ, յանցանքներու համար, որոնք դեռ երէկ չէին ա-
տիկա: Այնքան աճպարար ենք ուրիշները դատապար-
տելու որոշում տալէն յետոյ: Եռանդուն ընկեր մը, նկա-
տելովներու շատ կուռ շարքէ մը, կարդաց ջախջախիչ
ամբաստանագիր մը, որ կը խարանէր անոր վեցամսեայ
անջիղ ու անդեկ գործունէութիւնը, գինքը պատասխա-
նատու բռնելով շարքերուն մէջ զգացուած անիշխանու-
թեան, վէճի մոլութեան, հոս ու հոն արձագանգած գաղտ-
նիքներուն, - պարագաներ, որոնք բնոյթը կը կրէին
յեղափոխութիւնը տկարացնելու: Ի պատիւ դատախա-
զին, ընկեր Մաթիկ շնորհակալութեամբ աւելցուց, որ
գլուխ-գործոց այդ սեւ գիրը յօդուած մը չունէր դրա-
մական գեղծումի: Մնաց որ, այդ կէտին վրայ ինծի ան-
ծանօթ չէր, դեռ այդ օրերուն, յեղափոխութեան անողոք
վճիռը: Կ'անցնիմ արագ այդ տխուր փաստերէն: Անոնք,
որ հիմա յիշատակներ կը պատմեն, իրաւասու են վճռա-